[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
20	Մայիս	2019 թ.		Ա	6347694803
[4] Մատակարարման ամսաթիվ					
15	Մայիս	2019 թ.			

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	25 Փետրվար, 2019 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	6	3	1	5	9	9		
[9] Անվանումը	«ՍԵՐՎԻՍ ԷՅԷՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	2	6	3	1	5	9	9	/	1
[11] Բանկային տվյալները	Ինեկոբանկ ՓԲԸ	N 2050022394861001								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ. 16 շ. 40 41									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	Երևանի թիվ 1 ՏԳԲ	N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն	Մ.Եսայան						
	Լիազորագիր — Համար							
	Լիազորագիր — Ամսաթիվ							

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ֆիզիկական բլոկներ)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Եսայանի կողմից նշանակված դատահաշվապահական-դատաֆինանսատնտեսագիտական համալիր փորձաքննություն, Քրգործ թիվ 16850318	հատ	1	250000		250000	20	50000	300000
Ընդամենը						250000	X	50000	300000

Դուրս գրող՝ VARDANYAN STEPAN 3801760235
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոնը — ստորագրությունը — (անուն, ազգանուն)

պաշտոնը — ստորագրությունը — (անուն, ազգանուն)

20/05/2019 14:36:23

ՈՐՈՇՈՒՄ

դատահաշվապահական-դատաֆինանսատնտեսագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

ք. Երևան **24-ը մարտի 2019թ.**

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Մ.Ա.Եսայանս, վերանայելով թիվ 16850318 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի հուլիսի 20-ին՝ ՀՀ դատախազության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունից թիվ Դ-98-18 ԵԼ, 1645 գրությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով ընթացքը լուծելու համար ստացվել է ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով քննության պետին հասցեագրված Կարինե Աբրահամյանի դիմումն «Օդագնաց» համատիրության կողմից խախտումներ կատարելու վերաբերյալ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 2017 թվականի սեպտեմբեր-հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում «Օդագնաց» համատիրության կողմից յուրացվել է 113.452 ՀՀ դրամ:

Դեպքի առթիվ 2018 թվականի հուլիսի 30-ին ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 16850318 քրեական գործը:

2018 թվականի օգոստոսի 8-ին թիվ 16850318 քրեական գործի նախաքննության հետագա կատարումը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում Կարինե Ռաֆիկի Աբրահամյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ նախկինում աշխատել է ''Զվարթնոց'' օդանավակայանում որպես թռիչք ուղեկցուհի և այդ ժամանակաընթացքում բնակվել է օդանավակայանի հանրակացարաններում: 2015 թվականից նշված հանրակացարանների բնակիչներին վերաբնակեցրել են նորակառույց Բաբաջանյան փողոցի շենքերում: Վերաբնակվելուց հետո 2015 թվականից մինչև 2016 թվականի փետրվար ամիսը նշված շենքի պահպանման և շահագործման ծախսերը, տուրքերը /մաքրությունը, վերելակի սպասարկման, վերելակների անվտանգության սերտիֆիկացում, մաքրումի, կարգավորման, վարչական ծախսեր, էլեկտրաէներգիա վերելակների և ներքին լուսավորության համար, պահուստային ֆոնդ և այլ վճարումները/ կատարվել են Զվարթնոց օդանավակայանի գործադիր տնօրեն Մարսելոյի շնորհիվ: Նշված վճարումներն արդեն շենքի բնակիչների կողմից վճարելու համար պետք է ստեղծվեր համատիրություն, այդպես կազմավորվել է ''Օդագնաց'' համատիրությունը և համատիրության նախագահ ընտրվել է Գեղամ Ռաչատրյանը, իսկ կառավարիչ՝ Գեղամ Կարապետյանը: Համատիրությունը կազմավորելուց հետո համատիրության ժողովների ժամանակ /որոնք լինում են 3-4 ամիսների հաճախականությամբ/ 2016 թվականից բնակարանների մակերեսներ

բնակվարձի գինը սահմանվել է 1 քմ-ի համար 40 ՀՀ դրամ ամսվա վճար, սակայն գնալով այդ գինը սկսել է բարձրանալ և 2017 թվականից այն դարձել է 57 ՀՀ դրամ: Բնակվարձի գինը չի կարող կապված լինել տարվա եղանակների հետ և դրա գնային փոփոխությունները նախապես պետք է համաձայնեցնեն բնակիչների հետ, սակայն առանց ժողովի, առանց քննարկման բնակվարձի գինը բարձրացել է 1քմ -ի համար 40 դրամից 57 դրամ, սակայն արդեն մի քանի ամիս է ինչ բնակավարձի գինը դարձել է 50 դրամ: Այդ գումարները, որոնք հավաքվում են յուրաքանչյուր ամիս, պետք է ծառայեն իրենց նպատակին, այսինքն այդ գումարներով համատիրությունը պետք է հոգա շենքի կոմունալ ծախսերը, սակայն շենքի վերելակները լինում են դեպքեր խափանվում են, իսկ բանվորի հետ կապ չի լինում հաստատել, շենքերում մաքրուհիներ առկա չեն, մաքրությունը կատարվում է բնակիչների կողմից, բանվորներ առկա չեն և այդ աշխատանքները իրականացվում են բնակիչների կողմից, վերելակի սպասարկմամբ զբաղվող աշխատակիցները գտնվում են Զարենցավան քաղաքում: Ստացվում է համատիրությունը գումար է հավաքում, սակայն այդ գումարներն ի վերջո ում է հասնում հայտնի չէ: 2018 թվականին 'Զվարթնոց' օդանավակայանի կողմից որպես նվեր օգնություն համատիրությանն է տրամադրվել 360 հազար ՀՀ դրամ գումար/ 2 անգամ 180 հազարական դրամով/, որի վերաբերյալ հայտարարություն է փակցվել համատիրությունում, որպես բյուջեի լրացում, սակայն այդ գումարից ևս շենքի համար չի ծախսվել, իսկ համատիրության նախագահն հայտնել է, թե իբր այդ գումարները ծախսվել են գրենական պիտույքների վրա: 2018 թվականի հունիսի 25-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանից ստացել է հայցադիմում, որտեղ նշված է եղել, որ ''Օդագնաց'' համատիրությունը իր նկատմամբ 25.768 ՀՀ դրամի վճարման կարգադրություն արձակելու պահանջ է ներկայացրել և առաջարկել է 10 օրյա ժամկետում մարել այն: Համատիրության կողմից ներկայացված հաշվետվության մեջ Օդագնաց համատիրությունը նշել է, որ կնիքի և այլ գույքի ձեռքբերման համար հուլիսից մինչև դեկտեմբեր ամիսները ծախսում է 66.000 ՀՀ դրամ գումար, սակայն եղել են ամիսներ երբ 1 ամսվա համար է բյուջեից դուրս գրվել մոտ նույնքան գումար իբր կնիքի կամ այլ գույքի համար: Նշված շենքի առաջին հարկում գործում են խանութներ /հարևանյաց պարագաների, հագուստի վերանորոգման և շինանյութի/, ովքեր խանութներն աշխատեցնելու համար ամսեկան վարձավճար են տալիս համատիրությանը և այդ գումարները ևս պետք է ծախսվեն շենքերի ծախսերի համար, սակայն այդ գումարները ում հայտնի չէ, թե որտեղ են ծախսվում, և փոխարենը բնակարանի վարձի վճարումը համատիրությունը բարձրացնում, իսկ հարցերի դեպքում համատիրության նախագահը պատասխանում է, որ այդ գումարները ծախսվում են իրենց նպատակի համար/ վերելակի սպասարկում, լույս, լուսավորություն և այլն/: Միայն թվով 3 շենքերում է/ Բաբաջանյան 98/4,98/7 և 98/8 /, որ բնակվարձերը այդքան բարձր են, իսկ իր բողոքը բխում է նշված շենքերի բոլոր բնակիչների անունից:

Նախաքննության ընթացքում Երևան քաղաքի Բաբաջանյան 98/7 շենքի թիվ 5 բնակարանի բնակիչ Ավետիս Կեխեյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 2015 թվականից մինչև 2016 թվականի փետրվար-մարտ ամիսներին Երևան քաղաքի Բաբաջանյան 98/4, 98/7 և 98/8 շենքերի պահպանման և շահագործման ծախսերը, տուրքերը /մաքրությունը, վերելակի սպասարկման, վերելակների անվտանգության սերտիֆիկացում,մաքրուհի,վարպետ/բանվոր/, վարչական ծախսեր, էլեկտրաէներգիան

վերելակների և ներքին լուսավորության համար, պահուստային ֆոնդ և այլ վճարումները կատարվել են "Զվարթնոց" օդանավակայանի ղեկավարության կողմից: Դրանից հետո նշված վճարումներն արդեն շենքի բնակիչների կողմից վճարելու համար ստեղծվել է համատիրություն, այդպես կազմավորվել է 'Օդագնաց' համատիրությունը և համատիրության նախագահ իրեն անհայտ հանգամանքներում ընտրվել է Գեղամ Խաչատրյանը, իսկ կառավարիչը Գեղամ Կարապետյանը: Համատիրություն կազմավորելուց հետո 2016 թվականից բնակարանների մակերեսների բնակվարձի գինը սահմանվել է իր հիշելով 1 քմ-ի համար 57 ՀՀ դրամ, որից հետո 2017 թվականին բնակիչների պահանջով այդ գումարը դարձել է 50 ՀՀ դրամ: Նշված գումարները, որոնք հավաքվում են յուրաքանչյուր ամիս, պետք է ծառայեն իրենց նպատակին, սակայն ինքը երբևէ չի վճարել այդ գումարները, քանի որ չի վստահում Գեղամ Խաչատրյանին, ով համատիրության նախագահն է, քանի որ շատ բարձր սակագին է քառակուսի մետրի համար 50 կամ 57 դրամը, վերելակից ինքը չի օգտվում, քանի որ 2-րդ հարկում է բնակվում: Օդագնաց համատիրության ձևավորումից մինչև 2018 թվականի օգոստոս ամիսը շենքի միջանցքներում և մուտքերում մաքրուհիներ կամ հավաքարարներ չեն եղել, մաքրությունը կատարվել է բնակիչների կողմից, իսկ մաքրուհիների համար համատիրության նախագահի ասելով բնակիչները պետք է վճարեն: Ինքը չի հասկանում, թե ինչ աշխատանքների վրա են համատիրության բյուջեյի գումարները ծախսվում, նա հարցնում է համատիրության նախագահին և կառավարչին, իրեն պատասխանում են, որ եթե չվճարեն վարձերը, ապա վերելակը կանջատեն: Իր տեղեկություններով "Զվարթնոց" օդանավակայանը Օդագնաց համատիրությանը գումարներ է տվել, սակայն այդ գումարները ինչի վրա են ծախսվել անհայտ է: Իրենց շենքերի առաջին հարկերում առկա են տարածքներ, որոնք իր տեղեկություններով պատկանում են "Օդագնաց" համատիրությանը և դրանց շահագործման համար վճարված գումարները ևս պետք է ծառայեն իրենց շենքերի համար, սակայն ինքը խիստ կասկածում է, որ այդ տարածքների վարձերը համատիրությունը ծախսում է շենքերի բարելավման, կամ որևէ ծառայության համար: Իր դժգոհությունը կայանում է նրանում, որ բնակիչները ամսեկան վարձերը վճարում են, սակայն այդ գումարները համատիրության կողմից նպատակին չեն ծառայում:

Նախաքննության ընթացքում Երևան քաղաքի Բաբաջանյան 98/4 շենքի բնակիչ Մարգարիտա Մուրադյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ մինչ 2016 թվականը աշխատել է Զվարթնոց օդանավակայանում որպես կարգավար և բնակվել է օդանավակայանի տարածքում եղած հանրակացարանում: Դրանից հետո 2015 թվականին օդանավակայանի աշխատակիցներին Երևան քաղաքի Բաբաջանյան 98/4 շենքում բնակարաններ բաժանելուց ինքը ևս բնակարան է ստացել: Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցում օդանավակայանի աշխատակիցների համար կառուցվել է թվով 3 շենք և այդ շենքերի ծախսերը հոգալու համար 2016 թվականի հունիս կամ հուլիս ամսիներին ստեղծվել է "Օդագնաց" համատիրությունը, որի նախագահ բնակիչների կողմից ընտրվել է Գեղամ Խաչատրյանը, իսկ կառավարիչ ընտրվել է Գեղամ Կարապետյանը: Շենքերի բնակարանի վարձերի գումարը սկզբում կազմել է 1 քառակուսի մետրի համար 40 ՀՀ դրամ, որից հետո այդ գումարը դարձել է 57 ՀՀ դրամ, իսկ դրանից հետո կազմել է 50 ՀՀ դրամ: Իր կարծիքով այդ 50 ՀՀ դրամը բավականին շատ է և բնակիչների բողոքներից մեկը նաև այդ 50 ՀՀ դրամ սահմանված գումարն: Իր դժգոհությունը կայանում է նրանում, որ պարզ չէ թե ինչու է սահմանվել այդ 50 ՀՀ դրամը

և այդ գումարները պարզ չէ, թե ինչի համար է ծախսվել մինչ օրս, քանի որ նույնիսկ մինչև 2-3 ամիս առաջ մաքրությունները կատարվել են շենքի բնակիչների կողմից և ոչ մի մաքրուհի չի եղել շենքում, իսկ այն հարցին, թե իրենց վճարած գումարները ինչի վրա են ծախսվել՝ Գեղամ Խաչատրյանը ոչ մի կոնկրետ պատասխան չի տվել: Իրենց շենքի վերելակը արդեն իսկ գտնվում է վատ վիճակում, իսկ վերելակը սպասարկող աշխատակիցները ըստ Գ.Խաչատրյանի՝ բնակվում են Չարենցավան քաղաքում, եթե վերելակում մարդ մնա վերելակ սպասարկողը պետք է Չարենցավան քաղաքից ժամանի և ազատի այդ բնակչին : Իր դժգոհությունը կայանում է նրանում, որ բնակիչներին այդ թվում նաև իրեն հայտնի չէ, թե իրենց ամսական վճարած գումարները ինչի վրա են ծախսվում:

Նախաքննության ընթացքում Երևան քաղաքի Բաբաջանյան 98/4 շենքի բնակիչ Կարինե Մեկբեկյանը որպես վկա Մարգարիտա Մուրադյանի ցուցմունքին նույնաբովանդակ ցուցմունք է տվել:

Նախաքննության ընթացքում ''Օդագնաց'' համատիրության կառավարիչ Ռաֆայել Շահնազարյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 2016 թվականի երկրորդ կեսից կազմավորվել է ''Օդագնաց'' համատիրությունը և բնակիչների կողմից նախագահ է ընտրվել Գեղամ Խաչատրյանը, իսկ կառավարիչ՝ Գեղամ Կարապետյանը: Շենքերի բնակարանների ամսական մուծումները սկզբում կազմել է 40 ՀՀ դրամ քառակուսի մետրի համար, որից հետո 56 իսկ այժմ 50 դրամ : Որպես բնակիչ ինքը դժգոհ է համատիրության աշխատանքից քանի որ շենքերում բացակայում են մաքրությունը, այսինքն շենքերի շքամուտքերի մաքրությունը կատարվել է բնակիչների կողմից և մի քանի անգամ վերելակների հոսանքը անջատել են բնակիչների կողմից վարձը չմուծելու պատճառով : Հերթական ժողովների ժամանակ որպես նշված հարցրեի լուծում առաջարկվել է, որ այնպիսի մարդ նշանակվի կամ նախագահ կամ կառավարիչ և այդ երկու պաշտոնը համատեղի, ով կորաժարվի աշխատավարձից և կաշխատի հասարակական հիմունքներով որպեսզի գումարը հերիքի շենքի բարելավման համար : 2018 թվականի հունիս ամսին հարցման միջոցով քվերկություն է կազմակերպվել իրեն որպես համատրության նախագահ նշանակելու վերաբերյալ, որտեղ բնակիչներից մոտավորապես 20 հոգի ձեռնպահ է քվեարկել, 10 կողմ և 10 դեմ : Մոտ մեկ շաբաթ անց Գեղամ Խաչատրյանը իրեն զանգահարել է և ասել, որ քանի որ ինքը համաձայն է հասարակական հիմունքներով աշխատել և հարցի լուծում է տեսել իրեն կառավարիչ նշանակելով համատիրության վարչության կողմից : Դրանից հետո վարչության նստիստ է տեղի ունեցել և իրեն նշանակել են կառավարիչ : 2018 թվականի հուլիսի սկզբից զբաղեցնում է այդ պաշտոնը : Շենքի բնակիչների բողոքը ևս հանդիսանում է այն հանգամանքները, որ վերելակները անջատվում են և շենքում մաքրություն չի կատարվում համապատասխան մաքրուհիների կողմից, իսկ այդ 2 ամիս է նշված շենքերը մաքրուհու կողմից մաքրվում են : Գեղամ Խաչատրյանը ևս 2018 թվականի օգստոսի 1-ից հրաժարվել է իր ախատավարձից, որպեսզի համատիրության գումարը բավարարի ընթացիք ծախսերը կատարելու համար : Շենքի բնակիչների հիմնական բողոքը, ինչպես նաև իր բողոքը կայանում է նրանում, որ շենքի վերելակը չանջատվի և շենքում մաքրություն կատարվի : Վերը նշված բողոքներով շտկվել են համատրության նախագահի և կառավարչի կողմից աշխատավարձից հրաժարվելու արդյունքում և այդ գումարները ծախսվել են վերը նշված հարցերը կարգավորելու համար, ինչպես նաև նշված շենքերի առաջին հարկերում առկա կոմերցիոն տարածքրենը վարձավճարով և համապատասխան պայմանագրով վարձակալածների

կողմից վճարած գումարներով: 2018 թվականի հուլիս ամսից բոլոր վճարումները կատարվում են համատիրության բանկային հաշվին, ծախսերը նույնպես կատարվում են նույն բանկային հաշվով՝ հաշվետվությունը հեշտացնելու համար, իսկ նախկինում բնակիչներից շատերը առձեռն են վճարել վարձերը:

Նախաքննության ընթացքում Օդագնաց համատիրության նախագահ Գեղամ Աշոտի Խաչատրյանը որպես վկա ցուցմունք է տվել այն մասին, որ 2015 թվականին Էռնեկյանի կողմից կառուցվել է Երևան քաղաքի Բաբաջանյան 98/4, 98/7 և 98/8 շենքերը և օդանավակայանի հանրակացարանների բնակիչներին նշված շենքերում բնակարաններ է հատկացվել, այդ թվում նաև իրեն: Ակզբնական շրջանում նշված շենքերը չեն ունեցել համատիրություն, նաև շենքերի բնակիչները չեն իմացել, թե ինչ է նշանակում համատիրություն, քանի որ նախկինում բնակվել են հանրակացարանում: Բնակեցվելուց հետո օդանավակայանը խորհրդատու է վարձել, որպեսզի բնակիչների միջոցով համատիրություն ստեղծվի, իսկ մինչ ստեղծվելը բոլոր շենքերին վերաբերվող ծախսերը հոգացել է Զվարթնոց օդանավակայանը: 2016 թվականի հուլիսի ամսին բնակիչների հետ տեղի ունեցած հիմնադիր ժողովի արդյունքում ինքը միաձայն կերպով ընտրվել է ''Օդագնաց'' համատիրության նախագահ, այլ թեքնածություն չի եղել, նույն ժողովի ժամանակ կառավարիչ է ընտրվել Գեղամ Կարապետյանը և ընդհանուր ժողովով ընտրվել են համատիրության վարչության 6 անդամներ, ովքեր նշված շենքերի բնակիչներից են եղել: Նույն ժողովի ժամանակ կատարվել է հաշվարկներ շենքի ծախսերի վերաբերյալ և սահմանվել է 40 ՀՀ դրամ ամեն մետր քառակուսու դիմաց վ 6 ար ը: Նշված սակագինը որոշելու ժամանակ որևէ բնակչի կողմից տվյալ պահին առարկություններ չեն եղել: Նշված գումարը սահմանելիս հաշվի են առնվել համատիրության աշխատակիցների աշխատավարձները և գրենական պիտույքների ծախսերը: Այդ ժամանակ շենքերի վերելակների սպասարկման ծախսերը, հոսանքի ծախսը հոգացել է օդանավակայանը, իսկ համատիրությունը ստացված գումարը ծախսել է համատիրության նախագահին, կառավարչին և հաշվապահին աշխատավարձներ տալով և գրասենյակային պարագաներ թուղթ, գրիչ գնելով: 2017 թվականի մարտ ամսից բնակիչների հետ տեղի ունեցած համապատասխան ժողովի ժամանակ որոշվել է 40 ՀՀ դրամը դարձնել 57 ՀՀ դրամ, քանի որ այդ ժամանակահատվածից օդանավակայանը այլևս որևէ կերպ չի աջակցել նշված շենքերին, սակայն 2017 թվականի գարնանը համատիրությունը դիմել է օդանավակայանին որպեսզի օգնեն համատիրությանը, որից հետո օդանավակայանի գլխավոր տնօրեն Մարսելը Վենդեն չմերժելով համատիրության ֆոնդին 3 ամիս ամիսը 160.000 ՀՀ դրամ գումար է փոխանցել: Մարսելով Վենդեյի կողմից այդ աջակցությունը լինելու պատճառով է բնակարանների վարձի գումարը մեկ մետր քառակուսու դիմաց սահմանվել 57 ՀՀ դրամ, այլապես հնարավոր էր, որ ավելի բարձր գումար սահմանվեր: Իրենց նշված շենքերի ամեն մեկի առաջին հարկում առկա է թվով 2 տարբեր չափերի տարածքներ, որոնցից մեկը հանդիսանում է որպես ''Օդագնաց'' համատիրության գրասենյակ: Դրանցից մեկը 2018 թվականի իր հիշելով փետրվար ամսից, իսկ մյուսը 2018 թվականի մայիս ամսից հանձնել են վարձով՝ համապատասխանաբար 25.000 ՀՀ դրամով և մյուսը 48.900 ՀՀ դրամով, որոնց արդյունքում 2018 թվականի հունվարից, կրկին համապատասխան ժողովի արդյունքում բնակարանների վարձի գումարը մեկ մետր քառակուսու դիմաց սահմանվել է 50 ՀՀ դրամ: Համատիրությունը տեղյակ լինելով, որ մյուս տարածքը ևս վարձով հանձնելու է 2018 թվականի մայիս ամսին և նախորդ

կատարված հաշվարկների արդյունքում սահմանվել է այդ 50 << դրամը: Ներկա պարտին բնակարանների վարձի գումարը մետր քառակուսու համար կազմում է 50 << դրամ և եթե բոլոր բնակիչները պարտաճանաչ վճարեն գումարները, ապա նշված սահմանված գումարը կբավականացնի համատիրության ծախսերը: Համատիրության պարտականությունները՝ ընդհանուր բաժնային սեփականության կառավարումն է՝ օրինակ վերելակի սպասարկումը, շենքերի շքամուտքերի խնամքը, շենքերի շքամուտքերի դռների խնամքը, տանիքների խնամքը, վերելակների և շքամուտքերի հուսանքների ծախսերի վճարումները կատարելը: Շենքերի վերելակները սպասարկվում են վերելակների տեխնիկի կողմից, ամսական վերջինիս վճարվում է 106.000 << դրամ գումար, վերջինս շաբաթը երկու անգամ գալիս է նշված շենքեր, բացում է վերելակը, ստուգում է արդյոք որևէ տեխնիկական մաս հարկավոր չէ փոխել, ստուգում է վերելակի յուղը, հարկ եղած դեպքում համատիրությունը գնում է յուղ, որը տեխնիկի կողմից լրացվում է: Վերելակները սպասարկող մասնագետը աշխատում է 2017 թվականի մայիս ամսից և մշտապես ստացել է համախառն 106.000 << դրամ ամեն ամսվա համար: Շենքերի շաքամուտքերի խնամքը կատարվում է մաքրուհու կողմից, ով ստանում է մաքուր 50.000 << դրամ աշխատավարձ, վերջինս մաքրում է բոլոր 3 շենքերի շքամուտքերը, հարկերի միջանցքները և աստիճանները, իսկ եթե միջանցքում լամպ է փչանում, այն փոխվում է համատիրության կառավարիչի կողմից, ով դրա համար հավելյալ վճար չի ստանում, իսկ լամպի գումարը հանվում է համատիրության բյուջեյից: Նշված շենքերում մաքրուհի աշխատում է 2018 թվականի օգոստոսի կեսերից, իսկ մինչ այդ երկու անգամ իրենք ունեցել են մաքրուհիներ մեկը՝ 2017 թվականի իր հիշելով ամռանն է աշխատել 3-4 ամիս, իսկ մյուսը 2018 թվականի գարնանը ով աշխատել է մոտ 2-3 ամիս, իսկ երբ մաքրուհի չի եղել մաքրությունը իրականացվել է բնակիչների կողմից: Համատիրության կառավարման մարմնի մեջ կազմավորվելիս սկզբում աշխատավարձներ աշխատակիցները չեն ստացել, աշխատավարձ ստացել են 2016 թվականի հոկտեմբեր ամսից, համատիրության աշխատակիցներ են համարվում նախագահը՝ ով նշված ժամանակահատվածից մինչ 2017 թվականի դեկտեմբեր ամիսը ստացել է համախառն 60.000 << դրամ, իսկ 2018 թվականի հունվարից ստացել է 30.000 << դրամ համախառն գումար, իսկ 2018 թվականի օգոստոսից իր նախաձեռնությամբ հրաժարվել է աշխատավարձից և գումար չի ստանում: 2016 թվականի հոկտեմբերից համատիրության կառավարիչը ով մինչ 2018 թվականի հուլիս ամիսը հանդիսացել է Գեղամ Կարապետյանը, համախառն ստացել է 80.000 << դրամ գումար, որը վերջինս ստացել է մինչև 2017 թվականի դեկտեմբեր ամիսը, իսկ 2018 թվականի հունվարից նրա աշխատավարձը համախառն կազմել է 60.000 << դրամ գումար, համատիրության հաշվապահը միշտ՝ 2016 թվականի հոկտեմբերից ստացել է համախառն 30.000 << դրամ գումար: 2018 թվականի հուլիսից համատիրության կառավարիչը փոխվել է, կառավարիչ է հանդիսանում Ռաֆայել Շահնազարյանը, ով նս աշխատավարձ չի ստանում: Գ.Կարապետյանը իր պաշտոնից հրաժարվել է մի քանի բնակիչների պահանջով, սակայն իր կարծիքով վերջինս շատ լավ էր աշխատել և սրտացավ է եղել նշված շենքերի համար և բնակիչների մեծամասնությունը գոհ է եղել նրանից: Օդագնաց համատիրության կողմից բյուջեյի ամբողջ գումարը մշտապես ծախսվել է շենքերի բարելավման համար և որևէ գումար որևէ աշխատակցի կողմից չի յուրացվել: Բնակիչներից մի քանիսը բողոքում են քանի որ չեն պատկերացնում, թե համատիրությունը որքան աշխատանքներ է կատարում և իր կարծիքով ինքը և

կառավարիչը շատ ժամանակ են ծախսում համատիրությունը կառավարելու ուղղությամբ և դրա դիմաց շատ չնչին աշխատավարձ են ստացել, որից հրաժարվել են :

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք կարևոր հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատահաշվապահական բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243 և 248 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 16850318 քրեական գործով նշանակել դատահաշվապահական-դատաֆինանսատնտեսագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «ՍԵՐՎԻՍ ԷՅ ԷՄ» ՍՊԸ-ին:

2. Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա) ''Օդագնաց'' համատիրությունը՝ ստեղծման օրից մինչ օրս ընկած ժամանակահատվածում ինչ գործունեություն է իրականացրել, ինչ հիմունքներով և իրավական հիմքերով,

բ) ''Օդագնաց'' համատիրությունը՝ ստեղծման օրից մինչ օրս ընկած ժամանակահատվածում՝ ըստ ամիսների, ինչ ֆինանսական միջոցներ է ստացել, ինչ աղբյուրներից,

գ) ''Օդագնաց'' համատիրությունը՝ ստեղծման օրից մինչ օրս ընկած ժամանակահատվածում՝ երբ, ինչ ապրանքներ է ձեռք բերել, ինչ ծառայություններ է ստացել, ինչ նպատակով, ինչ արժեքով, եղել է արդյոք ապրանքների ձեռք բերումը, ծառայությունների ստացումը հաշվապահական հաշվառման տեսանկյունից հիմնավորված և համապատասխան նորմատիվային ակտերով սահմանված չափորոշիչներին, թե ոչ, եթե ոչ, ապա ինչ պատճառով և ով է դրա համար պատասխանատու և որքան է կազմել չպատճառաբանված ծառայությունների և ապրանքների արժեքը,

դ) ''Օդագնաց'' համատիրությունը՝ ստեղծման օրից մինչ օրս ընկած ժամանակահատվածում՝ ըստ ամիսների, ինչպիսի ծառայություններ է մատուցել և ինչ արժեքով,

ե) ''Օդագնաց'' համատիրությունը՝ ստեղծման օրից մինչ օրս ընկած ժամանակահատվածում ինչ բարեկարգման, շենքերի և վերելակների խնամքի հետ կապված այլ աշխատանքներ է կատարել, որքան է կազմել դրանց արժեքը,

զ) ''Օդագնաց'' համատիրությունը՝ ստեղծման օրից մինչ օրս ընկած ժամանակահատվածում շենքերի և վերելակների բարեկարգման և խնամքի հետ կապված այլ աշխատանքներ կատարելը եղել է արդյոք հաշվապահական հաշվառման տեսանկյունից հիմնավորված, թե ոչ, եթե ոչ, ապա կոնկրետ որ աշխատանքներ են եղել չհիմնավորված, որքան ավել գումարներ են դրա արդյունքում ծախսվել ոչ նպատակին,

է) ''Օդագնաց'' համատիրությունը՝ ստեղծման օրից մինչ օրս ընկած ժամանակահատվածում ըստ ամիսների շենքերի բնակիչներից որքան գումար է ստացել,

ը/ ''Օդագնաց'' համատիրությունը՝ ստեղծման օրից մինչ օրս ընկած ժամանակահատվածում շենքերի բնակիչներից վերցված գումարի չափը ինչ չափանիշներով է որոշվել, ինչի հիման վրա, գումարի չափի ինչպիսի փոփոխություններ են եղել, դրանք եղել են հիմնավորված, թե ոչ:

թ/ ''Օդագնաց'' համատիրությունը՝ ստեղծման օրից մինչ օրս ընկած ժամանակահատվածում, եթե բնակիչներից գանձված գումարը կամ դրա մի մասը եղել է չհիմնավորված, ապա որքան է կազմել անհիմն գանձված գումարները ըստ ամիսների և ''Օդագնաց'' համատիրության հիմնադրման օրվանից մինչ օրս անհիմն գանձված գումարների ընդհանուր չափը,

ժ/ ''Օդագնաց'' համատիրությունը՝ ստեղծման օրից մինչ օրս ընկած ժամանակահատվածում ստացած գումարների և կատարած ծախսերի ու առկա միջոցների միջև կա արդյոք անհամապատասխանություն, որքան է կազմում նշված անհամապատասխանության գումարի չափը, նշված անհամապատասխանությունը ինչի արդյունքում է առաջացել, ով է այդ խախտումների պատասխանատուն,

3. Անհրաժեշտության դեպքում փորձաքննությունն իրականացնող փորձագետներին կտրամադրվել քրեական գործի նյութերը:

4. Փորձաքննությունն իրականացնելու նպատակով փորձագետին տրամադրել սույն որոշումը և ''Օդագնաց'' համատիրությունից առգրավված՝ 2016 թվականի հուլիսից մինչ 2018 թվականի հոկտեմբեր ամիսը ընկած ժամանակահատվածի հաշվապահական փաստաթղթերի բնօրինակները, աշխատողների աշխատանքային պայմանագրերը և շենքերի առաջին հարկերում գտնվող տարածքների վարձակալական պայմանագրերը 1 փաթեթում կնիքված քննիչի 309 կնիքով: Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ արտացոլված չեն, սակայն կարող են առաջանալ ստուգումն իրականացնելու ընթացքում, կմտնեն մասնագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է էական նշանակություն ունենալ:

Ավագ քննիչ,
առաջին դասի խորհրդական՝ **Մ.Ա.Եսայան**